

Արձանագրություն N 3

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կարիքների համար համակարգչային սարքավորումների պահպանման և վերանորոգման ծառայությունների գնման «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/3» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

« 8 » « հունվարի » 2018թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ
Հանձնաժողովի անդամներ
Հանձնաժողովի քարտուղար

Արմեն Փարսադանյան
Ալբերտ Մուրադյան,
Մանյա Մխիթարյան
Աննա Հարությունյան

1. ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/3 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու և ՀՀ ԿԱ ՊԵԿ եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ

(Ա.Փարսադանյան)

1.1 «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/3» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից դեկտեմբերի 26-ին ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և ներկայացվել է «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/3» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասին պահանջվող տեղեկատվությունը: Եզրակացությունը ստացվել է դեկտեմբերի 29-ին. մասնակիցների ներկայացրած տեղեկատվությունը համարվել է իրականությանը համապատասխանող:

2. Հանձնաժողովը որոշեց՝

(Ա.Փարսադանյան)

2.1 «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/3» ծածկագրով մրցույթի 1-ին չափաբաժնի գծով հաղթող ճանաչել Ա/Ձ Անուշ Պետրոսյանին, 2-րդ չափաբաժնի գծով՝ «Սերվիս Պլուս» ՍՊԸ-ին:

2.2 «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/3» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցներին ծանուցել անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով ներկայացնել պայմանագրի ապահովում՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

2.3 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը: Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:


**3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը
հաստատելու մասին**

(Ա. Փարսադանյան)

3.1 «ՀՀ ԱՆ ԳՀԾԶԲ-2018/3» ծածկագրով մրցույթի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրի կնքմանը հաջորդող օրը, ժամը՝ 11:00-ին, ՀՀ առողջապահության նախարարության (հասցեն՝ ք. Երևան, Կառավարական տուն 3) 2-րդ հարկում՝ նիստերի դահլիճում:


Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝




Արմեն Փարսադանյան

Հանձնաժողովի անդամներ՝



Արթուր Մուրադյան



Մանյա Մխիթարյան

Հանձնաժողովի քարտուղար՝



Աննա Հարությունյան